



NATIONAL
ENDOWMENT
FOR
DEMOCRACY

SUPPORTING FREEDOM AROUND THE WORLD

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց

Երևան, 2022

Զեկույցը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (National Endowment for Democracy) ֆինանսավորմամբ՝ «Դատաիրավական բարեփոխումները և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի շրջանակներում: Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները միմիայն «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանն են և կարող են չհամընկնել Ժողովրդավարության ազգային հիմնադրամի տեսակետներին:

Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության մշտադիտարկման զեկույց-31 էջ

Երախտագիտության խոսք

«Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում Ժողովրդավարության ազգային հիմնադրամին՝ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս ընթացող դատաիրավական համակարգի բարեփոխումներին նվիրված այս ուսումնասիրությունն իրականացնելու և ընթերցողի ուշադրությանը ներկայացնելու հնարավորության համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
1. Ռազմավարական նպատակներն ու դրանց կատարման ընթացքը	8
1.1. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում	8
1.2. Սահմանադրական բարեփոխումների անցկացում	12
1.3. Ընտրական օրենսդրության բարեփոխում	14
1.4. Դատական իշխանության անկախության և անաչառության ապահովում	16
1.5. Կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ	21
1.6. Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում	22
1.7. Քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում	23
2. Եզրակացություն	26
3. Առաջարկություններ	27
4. Ամփոփում	28
5. Abstract	29
6. Համառոտագիր	30
7. Հապավումների ցանկ	31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ նաև Ռազմավարություն)¹ հաստատվել է ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ²:

Հայաստանի Հանրապետությունում առաջին դատաիրավական բարեփոխումները իրականացվել են 1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո: 2005 թվականի սահմանադրական փոփոխություններին հաջորդել է դատաիրավական բարեփոխումների երկու ռազմավարությունների ընդունումը. առաջինն ընդգրկել է 2009-2011 թվականները, երկրորդը՝ 2012-2016 թվականները (սրա ժամկետը երկարաձգվել է մեկ տարով՝ մինչ 2017 թվականի ավարտը³):

Չնայած դատաիրավական բարեփոխումների ընդունված ռազմավարություններին, չենք կարող արձանագրել, որ դրանց արդյունքում Հայաստանում բարձրացավ դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը, կամ դատարաններում և իրավապահ մարմիններում վերացան կոռուպցիոն երևույթները:

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի (այսուհետ՝ նաև Հանձնակատար) 2015 թվականի մարտի 10-ի թիվ CommDH(2015)2 զեկույցի⁴ 37-րդ կետի համաձայն՝ դատական համակարգի վերաբերյալ զեկույցներում արձանագրված կոռուպցիայի զգալի մակարդակը լուրջ մտահոգության տեղիք է տալիս՝ հատկապես հաշվի առնելով դրա քայքայիչ ազդեցությունն իրավունքի գերակայության նկատմամբ հանրային վստահության վրա: Չեկույցի 72-րդ կետում Հանձնակատարը նաև նկատել է, որ հասարակության որոշ մասերում պահպանվում է այն խորը կարծիքը, թե արդարադատությունն ի կատար է ածվում «չափաբաժիններով» և ընտրողաբար, և որ ըստ երևույթին ցցուն հակասություն գոյություն ունի մի կողմից իշխանությունների հետ՝ ենթադրաբար կապված կամ նրանց ներկայացնող անձանց նկատմամբ դրսևորվող ակնհայտ մեղմ վերաբերմունքի (նույնիսկ եթե նրանք մեղադրվել են ծանր խախտումների համար), մյուս կողմից՝ իշխանություններին ընդդիմացողների նկատմամբ կիրառվող խիստ վերաբերմունքի և պատիժների միջև:

¹ Սույն զեկույցի մեջ ռազմավարության կատարմանն անդրադարձել ենք միայն 2019-2021 թվականների կտրվածքով, ընդ որում, ռազմավարական նպատակների կատարման ընթացքը դիտարկել ենք՝ ըստ գործողությունների ծրագրերի:

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=135487>

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50926>, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110851>

⁴ [https://rm.coe.int/ref/CommDH\(2015\)2](https://rm.coe.int/ref/CommDH(2015)2)

ԱՄՆ Ժողովրդավարության, մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրոյի կողմից 2018 թվականի ապրիլի 20-ին հրապարակված Մարդու իրավունքների զեկույցում (2017 թ.) արձանագրվել է, որ չնայած օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ, սակայն ընդհանուր առմամբ անկախություն ու անկողմնակալություն դատական համակարգի կողմից ի ցույց չի դրվում: Դատավորները շարունակում էին ենթարկվել քաղաքական ճնշումների գործադիր բոլոր օղակների, իրավապահ կառույցների կողմից, ինչպես նաև դատական աստիճանակարգի շրջանակում⁵:

Դատական իշխանության անկախության բացակայությունը և դրա հետևանքով ՀՀ-ում առկա մարդու իրավունքների հիմնախնդիրները փաստվել են նաև Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Հայաստանի արդարադատության համակարգի անկախության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության ամրապնդումը» համատեղ ծրագրի շրջանակում կազմված զեկույցում⁶:

Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունում նախատեսվել են արմատական փոփոխություններ դատական համակարգի արդյունավետության, անկախության և դատական իշխանությունում կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառներում:

Ռազմավարության հիման վրա կազմվել է գործողությունների երեք ծրագիր՝ կարճաժամկետ (2019 թվականի 2-րդ կիսամյակից մինչև 2020 թվական), երկարաժամկետ (2021 թվականից մինչև 2023 թվական) և էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման վերաբերյալ առանձին գործողությունների ծրագիր (2019 թվականի 2-րդ կիսամյակից մինչև 2023 թվական):

Ռազմավարությամբ ամրագրվել են հետևյալ ռազմավարական նպատակները՝

- ա) էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծում և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում,
- բ) անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում,
- գ) սահմանադրական բարեփոխումների անցկացում,
- դ) ընտրական օրենսդրության բարեփոխում,
- ե) դատական իշխանության անկախության և անաչառության ապահովում,
- զ) դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում,
- է) կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ,

⁵ https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2017_arm.pdf

⁶ <https://www.coe.int/en/web/cdcj/-/analysis-of-the-results-of-court-users-satisfaction-survey-of-all-courts-of-all-instances-of-armenia>

- ը) դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում,
- թ) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ստեղծում,
- ժ) իրավապահ համակարգի բարեփոխում,
- ի) քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում,
- լ) քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում,
- իւ) վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում,
- ծ) սնանկության ոլորտի բարեփոխումներ,
- կ) վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում,
- հ) նոտարական համակարգի արդյունավետության բարձրացում,
- ձ) փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացում,
- ղ) հարկադիր կատարման համակարգի բարեփոխումներ:

Հաշվի առնելով «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գործունեության ուղղությունները և մասնավորապես 2019-2021 թվականներին իրականացված ծրագրերը՝ սույն զեկույցի մեջ անդրադարձ է կատարվել Ռազմավարության ռազմավարական նպատակների մի մասին: Դրանք են.

1. անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում,
2. սահմանադրական բարեփոխումների անցկացում,
3. ընտրական օրենսդրության բարեփոխում,
4. դատական իշխանության անկախության և անաչառության ապահովում,
5. կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ,
6. դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում,
7. քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում:

1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1.1. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում

2018 թվականի գարնանը Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից հետո *անցումային արդարադատության* մեխանիզմի կիրառման անհրաժեշտության մասին բարձրաձայնել են հասարակության գրեթե բոլոր շերտերը՝ քաղաքացիական հասարակություն, քաղաքական միավորներ (կուսակցություններ), հասարակական գործիչներ, իրավապաշտպաններ և այլք: Անցումային արդարադատության կիրառումը կարևորվում էր հատկապես այն պատճառով, որ երկրում տեղի էին ունեցել աննախադեպ քաղաքական փոփոխություններ, ինչը ենթադրում էր գործընթացի ամբողջականացում, այն է՝ նախորդ՝ ոչ ազատ (որոշ գնահատականներով՝ ավտորիտար) համակարգից սահուն անցում դեպի ժողովրդավարություն: Այս առումով Կառավարությունը հաստատված Ռազմավարությամբ նախատեսել էր ավելի հավակնոտ նպատակ՝ *անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում*: Սա կարելի էր ողջունել, սակայն իրագործման իրավական մեխանիզմները բացակայում էին: Իրավունքի գերակայության ամրապնդման հնարավոր կլիներ հասնել, եթե այդ սկզբունքը ամրագրված լիներ ՀՀ Սահմանադրությամբ: Դա, սակայն, չկար, ուստի և ի սկզբանե բացակայում էր նպատակին հասնելու իրավական հիմքը: Մյուս կողմից դրան հնարավոր կլիներ հասնել, եթե սահմանադրական բարեփոխումների անցկացմանն առնչվող ռազմավարական նպատակը կյանքի կոչվեր ավելի վաղ: Պետք է նկատել, որ հաստատված Ռազմավարության գործողությունների ծրագրով նախ նախատեսված էր անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդման նպատակին հասնելը, ապա միայն սահմանադրական բարեփոխումների անցկացումը, ինչը նշանակում է, որ ի սկզբանե արդյունավետ և ճիշտ չէր կազմվել Ռազմավարության նպատակների իրագործման գործողությունների ծրագիրը (ժամանակացույցը): Այդուհանդերձ, պետք է փաստել, որ անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդման հիմնավորումները կարևոր էին հայաստանյան հասարակության և պետության համար: Կառավարության հաստատած Ռազմավարության մեջ որպես հիմնավորում մասնավորապես նշված է.

«1991 թվականի սեպտեմբերից 2018 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում պարբերաբար տեղի են ունեցել մարդու իրավունքների զանգվածային

խախտումներ՝ զուգակցված երկրում համակարգային և քաղաքական կոռուպցիայի երևույթների կայուն առկայությամբ: Այս հանգամանքն ընդգծվել է մի շարք միջազգային զեկույցներում⁷:

2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները հետևանք էին այս երևույթների արդյունքում հասարակության մեջ կուտակված անարդարության զգացման, և ժողովրդի մի ստվար զանգված, այլևս այլ ելք չտեսնելով, բողոքի իր ձայնը բարձրացրեց, որպեսզի հետագայում ունենա այնպիսի Հայաստան, որտեղ մարդու իրավունքները և ազատությունները հիմնարար արժեք են, մարդը իրեն պաշտպանված, ամուր և ուժեղ է զգում: Այս պայմաններում կա երկու ճանապարհ. մոռանալ անցյալը և շարժվել առաջ կամ վերլուծել անցյալը, հավաքել տեղեկություններ իրավունքների խախտման վերաբերյալ, առավելագույնս փորձել վերականգնել տուժողների իրավունքները, գնահատական տալ անցյալին և կատարել ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որպեսզի բացառվի հետագայում որևէ իրավիճակում նման երևույթների կրկնությունը»:

Ռազմավարությամբ նախատեսվում էր կիրառել *անցումային արդարադատության* հետևյալ գործիքակազմը.

✓ հավաքել մարդու իրավունքների զանգվածային, պարբերական խախտումների վերաբերյալ փաստեր առնվազն հետևյալ ոլորտներում՝

ա) 1991 թվականի սեպտեմբերից ի վեր տեղի ունեցած բոլոր ընտրական գործընթացներ, բ) 1991 թվականի սեպտեմբերից ի վեր հետընտրական գործընթացում տեղի ունեցած քաղաքական հետապնդումներ,

գ) Հայաստանում պետության կամ հասարակության կարիքների համար գույքի հարկադիր օտարումներ,

դ) սեփականազրկումների այլ դրսևորումներ,

ե) ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողներ,

✓ դիտարկել խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը,

✓ հանցագործությունների վերաբերյալ նոր տեղեկությունների ի հայտ գալու դեպքում այդ տեղեկությունների տրամադրում իրավապահ մարմիններին,

⁷ Universal Periodic Review - Armenia (<https://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/AMindex.aspx>), Trial Monitoring Project in Armenia (April 2008 - July 2009) - OSCE/ODHIR (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.osce.org/hy/odih/75779>), Resolution 1609 (2008) The functioning of democratic institutions in Armenia (հասանելի է հետևյալ հղումով՝ <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17643&lang=en>), The Human Freedom Index (<https://www.cato.org/human-freedom-index-new>), Freedom in the World 2018 (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2018>), Control of Corruption Indicator - Millennium Challenge Corporation (հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.mcc.gov/who-we-fund/scorecards?fw_scorecard_country=6170)

✓ ինստիտուցիոնալ բարեփոխումների, այդ թվում՝ մշտադիտարկման այնպիսի համակարգերի ներդրում, որոնց կիրառումը թույլ կտա վեր հանել հնարավոր խախտումները և կբացառի անցյալի սխալների կրկնությունը,

✓ ստացված տեղեկությունների ամփոփում գեկույցի մեջ, դրա հրապարակում և գնահատական անցյալին:

Ընդ որում, խախտումներին անդրադարձ կատարելու համար դրանց վերաբերյալ դատական ակտի առկայությունը չպետք է լինի պարտադիր:

Անցումային արդարադատության կարևորությունը ընդգծվեց նաև ՀՀ Ազգային ժողովի նախագահի նախաձեռնությամբ 2019 թվականի մայիսի 24-ին հրավիրված «Անցումային արդարադատության գործիքների կիրառման հեռանկարները Հայաստանում» խորագրով խորհրդարանական լսումների ժամանակ⁸:

Պետք է փաստել, որ սույն գեկույցի ուսումնասիրման ժամանակաընթացքում անցումային արդարադատության գործիքակազմը գրեթե չի կիրառվել: Խոսքը հատկապես դրա համակարգված և հետևողական կիրառման մասին է: Թերևս որոշակի վերապահումով կարելի է առանձնացնել ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողներին վերաբերող խնդիրների (փաստերի) մասնակի ուսումնասիրումը:

ՀՀ Վարչապետի 2020 թվականի օգոստոսի 3-ի N 888-Ն որոշման⁹ հիման վրա ձևավորվել է աշխատանքային խումբ՝ ոչ մարտական պայմաններում մահացած զինծառայողների մահվան դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի ուսումնասիրության նպատակով:

Աշխատանքային խումբը ուներ սահմանափակ իրավասություններ, և խմբի կողմից ուսումնասիրության ենթակա քրեական գործերի ցանկը սահմանված էր որոշման N 3 հավելվածով. դրանք 8-ն էին:

Պետք է արձանագրել, որ թեև վարչապետի այս որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը առերևույթ իրականացնում էր Ռեզոլուցիայի նախատեսված մարդու իրավունքների զանգվածային, պարբերական խախտումների վերաբերյալ *ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողներ* ոլորտի ուսումնասիրությունը, այդուհանդերձ, որոշումը կայացվել էր ոչ թե ի կատարումն Դատական և

⁸ <https://bit.ly/3xr0vsJ>

⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159888>

իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության կամ դրա շրջանակներում, այլ սզակիր մայրերի հետևողական պահանջների ու բողոքների լուծման նպատակով¹⁰:

Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման անհնարինությունը առաջին հերթին պայմանավորված էր նաև նրանով, որ այդպես էլ չստեղծվեց նախատեսված փաստահավաք հանձնաժողովը: Ըստ ռազմավարության՝ այն պետք է ստեղծվեր «Փաստահավաք հանձնաժողովի մասին» օրենքով դեռևս 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում: Հանձնաժողովը կազմված էր լինելու առավելագույնը 20 անդամից, գործողության ժամկետը՝ երկու տարի՝ անհրաժեշտության դեպքում ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ:

Հանձնաժողովի գործունեության վերջնարդյունքը պետք է լիներ զեկույցի հրապարակումը, որի մեջ կարտացոլվեին փաստահավաք գործունեության ընթացքում հավաքված տեղեկությունները: Դրանց հիման վրա հանձնաժողովը Ազգային ժողովին և Կառավարությանը պետք է ներկայացներ խորհրդատվական եզրակացություն՝ այդ իրավախախտումներից տուժած անձանց իրավունքների վերականգնման հնարավորության, ձևերի, չափերի և դրա անհրաժեշտության, ինչպես նաև ինստիտուցիոնալ բարեփոխումների անհրաժեշտության և դրանց ուղղությունների վերաբերյալ:

Ոչ մարտական պայմաններում մահացած զինծառայողների մահվան դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի ուսումնասիրության նպատակով ստեղծված աշխատանքային խումբը 2020-2021 թվականների ընթացքում ՀՀ վարչապետին ներկայացրել է ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողներ Տիգրան Օհանջանյանի, Վալերիկ Մուրադյանի և Արթուր Ղազարյանի գործերով խորհրդատվական եզրակացությունները¹¹:

Կարող ենք արձանագրել, որ փաստահավաք հանձնաժողովի ստեղծմանը հետամուտ չեղավ ինչպես Կառավարությունը, այնպես էլ Ազգային ժողովը, որի մեծամասնություն կազմող խմբակցությունը լիովին աջակցում և սատարում էր Կառավարության հաստատած ռազմավարությունը:

2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում, երբ փաստացի պետք է ձևավորվեր փաստահավաք հանձնաժողովը (ԱԺ-ն պետք է ընդուներ համապատասխան օրենքը), Կառավարությունը օրենսդրի (քաղաքական մեծամասնության) հետ միասին նախաձեռնեց սահմանադրական հանրաքվե: Պետք է նկատել, որ թեև սա բնությով դատաիրավական փոփոխություն էր, սակայն որևէ առնչություն չունեի Կառավարության հաստատած Ռազմավարության հետ, այլ ուղղված էր խիստ մասնավոր

¹⁰ <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/03/08/Nikol-Pashinyan-meeting/>,
<https://www.youtube.com/watch?v=TnMBRF4ca5E>

¹¹ 2022 թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ներկայացվել է ևս մեկ խորհրդատվական եզրակացություն:

(Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակի/պաշտոնավարման) հարցի լուծմանը: Փաստացի Կառավարությունը, ինչպես նաև Ազգային ժողովը, անտեսելով արդեն իսկ հաստատված Ռազմավարության կենսագործումը, հրնթացս իրականացնում էին փոքրամասշտաբ «Ռազմավարություն 2-ը»:

Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում նպատակի կատարված չլինելու հետևանքով հնարավոր չի եղել դիտարկել տուժողների իրավունքների վերականգնման հարցը: Օրինակ՝ որպես իրավունքի վերականգնման միջոց կարող էին կիրառվել գույքային հատուցումները (միանվագ կամ պարբերական վճարումների ձևով), առողջապահական, կրթական ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև պաշտոնական հրապարակային ներողություն հայցելը, տուժողի համաձայնությամբ նրա պատմության հրապարակումը և այլն:

1.2. Սահմանադրական բարեփոխումների անցկացում

Ինչպես նշված է Կառավարության հաստատած Ռազմավարության մեջ, *«Սահմանադրական փոփոխություններ կատարելու նախադրյալները ծագել են այն հանգամանքից, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների իրականացումը որոշակիորեն ուղղորդված է եղել այդ փոփոխությունները նախաձեռնող քաղաքական ուժի շահերով¹²»*:

Ըստ սահմանադրական բարեփոխումների անցկացման նպատակով ամրագրված ռազմավարական ուղղության՝ 2020 թվականի առաջին եռամսյակում Կառավարությունը ստեղծելու էր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով, որը պետք է քննարկեր սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու հարցը և ներկայացներ սահմանադրական փոփոխությունների նախագիծը:

Սահմանադրական բարեփոխումների համար կարևորվել էին մի շարք հայեցակարգային հարցեր՝ վերպետական կառույցներին անդամակցելիս տվյալ վերպետական կառույցի ընդունած նորմատիվ իրավական ակտերի կիրառելիության առանձնահատկությունները, Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին տրված լիազորությունների շրջանակը, Ազգային ժողովի պատգամավորների ընտրության և խորհրդարանական մեծամասնության ձևավորման կարգը, ինչպես նաև պատգամավորների թիվը, Սահմանադրությամբ նախատեսված՝ Կառավարությանը, Վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմինների կազմավորման և լիազորությունների հետ կապված հարցերը, Սահմանադրությամբ նախատեսված մարմինների միջև լիազորությունների տարանջատումը և հավասարակշռումը, Սահմանադրական դատարանի պատշաճ և բնականոն գործունեությունը

¹² <https://transparency.am/hy/news/view/1086>, http://www.aprgroup.org/images/Library/Constitution/report_constitution_web_q.pdf

խոչընդոտող հնարավոր սահմանադրաիրավական փակուղիների վերացումը, Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության և նշանակման, նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունները դադարեցնելու, Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման կարգը, դերը և լիազորությունները, որոշումների բողոքարկումը, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից համապատասխան նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 3-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմելը և այլն:

2019 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ Վարչապետը ընդունում է «Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի ստեղծման գործընթաց սկսելու մասին» 1986-Ա որոշումը¹³:

Որոշմամբ սահմանված էր, որ հանձնաժողովը կազմված կլինի 15 հիմնական անդամից, ի պաշտոնե ընդգրկվելու էին արդարադատության նախարարը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը, Մարդու իրավունքների պաշտպանը, դատավորների ընդհանուր ժողովի 1 թեկնածու, 6 իրավաբան գիտնականներ, հասարակական կազմակերպությունների 2 ներկայացուցիչներ, մեկական ներկայացուցիչ՝ խորհրդարանական յուրաքանչյուր խմբակցությունից: Հանձնաժողովի կազմում որպես լրացուցիչ անդամ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, արդարադատության նախարարի ներկայացմամբ կարող էին աշխատել նաև միջազգային երկու փորձագետներ:

2020 թվականի փետրվարի 12-ին ՀՀ Վարչապետը ընդունում է 181-Ա որոշումը՝ «Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին»¹⁴:

ՀՀ Վարչապետի 1986-Ա և 181-Ա որոշումներն ընդունվել էին ի կատարումն Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության:

2021 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Վարչապետը կայացնում է «Սահմանադրական բարեփոխումների խորհրդի ձևավորման գործընթաց սկսելու և Հայաստանի Հանրապետության

¹³ <https://www.e-gov.am/decrees/item/21648/>

¹⁴ <https://www.e-gov.am/decrees/item/21810/>

Վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 30-Ի N 1986-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1442-Ա որոշումը¹⁵:

Որպես որոշման հիմք վկայակոչվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշումը:

Հետագայում (27.01.2022) ձևավորվում է սահմանադրական բարեփոխումների խորհուրդ, հաստատվում խորհրդի անհատական կազմը¹⁶ և սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անհատական կազմը (29.03.2022)¹⁷:

Ինչպես տեսնում ենք, *սահմանադրական բարեփոխումների անցկացում* ռազմավարական նպատակը ևս չի կատարվել: Ավելին, գործընթացն սկսվել և ընթացել է՝ համաձայն գործողությունների ծրագրի, սակայն հետագայում չեղարկվել է՝ մեկ այլ նմանօրինակ գործընթաց սկսվելու հիմքով: Հատկանշական է, սակայն, որ այն սկսել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության, սակայն չեղարկվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման հիման վրա:

1.3. Ընտրական օրենսդրության բարեփոխում

Ընտրական օրենսդրության բարեփոխումների առաջնային նպատակը ժողովրդավարական (միջազգային չափանիշներին համապատասխան) ընտրական օրենսդրությամբ սահմանված համակարգի ինստիտուցիոնալ կայացումն է, որը հնարավոր է իրականացնել ընտրողների համար հասկանալի և կանխատեսելի ընտրակարգ ներդնելու, բոլոր օղակներում ընտրական վարչարարությունը բարելավելու, քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետությունն ու թափանցիկությունը բարձրացնելու, ընտրակաշառքի և ընտրողների նկատմամբ ճնշումները բացառելու համար անհրաժեշտ գործուն մեխանիզմներ ներդնելու, բազմակի քվեարկությունը բացառող երաշխիքներն ավելացնելու և քվեարկության գործընթացների մատչելիությունն ապահովելու, ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դերակատարների պատշաճ գործունեությունը երաշխավորելու, ընտրական վեճերի գործընթացները հստակեցնելու, դրանց արդյունավետությունը բարձրացնելու միջոցով:

¹⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=158657>

¹⁶ <https://www.e-gov.am/decrees/item/24389/>

¹⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=161507>

Ռազմավարությամբ նախատեսվում էր ընտրական օրենսդրության մեջ ամրագրել այնպիսի կառուցակարգեր, որոնց միջոցով կբարձրանար հանրության շրջանում ընտրությունների և ընտրական գործընթացի արդարացիության նկատմամբ վստահությունը, ընտրվող իշխանությունների լեգիտիմությունը: Ըստ այդմ, ընտրական օրենսդրության բարեփոխումները պետք է ընդգրկեն հետևյալ ուղղությունները՝

- թեկնածուների տարածքային ցուցակների վերացում, պարզ համամասնական ընտրակարգի ընդունում,
- կուսակցական բազմակարծության ապահովման նպատակով ընտրվելու նվազագույն շեմի իջեցում,
- կոալիցիաների ձևավորման կարգի բարեփոխում,
- ընտրական գործընթացների նկատմամբ վերահսկողության հնարավորությունների բարձրացում, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման ընթացակարգի վերանայում,
- ընտրագրավի գումարի չափի վերանայում,
- հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացի մատչելիության ապահովում,
- ընտրողների ցուցակների կազմման և վարման գործընթացի արդյունավետության բարձրացում,
- բանավեճի և լուսաբանման վերաբերյալ կարգավորումների բարեփոխում,
- դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության բարեփոխում:

Ընտրական օրենսդրության բարեփոխումների հիմնական գործիքի՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի մեջ ուսումնասիրության ժամանակահատվածում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, որոնցից առավել շոշափելի է 2021 թվականի ապրիլի 1-ին ընդունվածը¹⁸. «2021 թվականի ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով ամրագրվեց պարզ համամասնական ընտրակարգի դրույթը, որի պահանջը տարիներ շարունակ արտահայտվել էր քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից, և որը համահունչ է 2015 թվականի սահմանադրական փոփոխություններին և ՏԻՄ ընտրակարգի՝ արդեն իսկ

¹⁸ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152092>

ընդունված փոփոխություններին»¹⁹: Այս փոփոխություններն էապես կիրառվեցին 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով *իրավունքի գերակայության ամրապնդում, սահմանադրական բարեփոխումների անցկացում, ընտրական օրենսդրության բարեփոխում* ռազմավարական նպատակների իրականացմանը զուգահեռ ՀՀ Կառավարությունը և Ազգային ժողովը (քաղաքական մեծամասնությունը), ինչպես վերը նշել ենք, նախաձեռնեցին սահմանադրական հանրաքվե: Այս հանրաքվեի անհրաժեշտությունը պայմանավորված էր քաղաքական նպատակահարմարությամբ և չուներ իրավական բնույթ: Այս պնդման հիմքը հանրաքվեի չեղարկվելն է: Այսպես, Հայաստանի Հանրապետության նախագահի 2020 թվականի փետրվարի 9-ի ՆՀ-32-Ն հրամանագրով 2020 թվականի ապրիլի 5-ին նշանակվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվե²⁰: Շուրջ մեկ ամիս հետո ՀՀ-ում հայտարարվում է արտակարգ դրություն, և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 16.03.2020 թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը (...), տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի նախապատրաստման և անցկացման նպատակով իրականացվող բոլոր աշխատանքները, գործընթացները և միջոցառումները դադարեցվում են գործընթացի բոլոր մասնակիցների կողմից»²¹: Ավելի ուշ Ազգային ժողովի 2020 թվականի հունիսի 30-ի թիվ ԱԺՈ-003-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում Ազգային ժողովի 2020 թվականի փետրվարի 6-ի «Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին» ԱԺՈ-001-Ն որոշումը²²:

1.4. Դատական իշխանության անկախության և անաչառության ապահովում

1985 թվականին Միավորված ազգերի կազմակերպության ընդունած Դատական իշխանության անկախության սկզբունքների²³ համաձայն՝ դատական իշխանության անկախությունը պետք է երաշխավորվի տվյալ պետության կողմից և ամրագրվի Սահմանադրության կամ օրենքի մակարդակում: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարականով²⁴ սահմանվում է դատարանների անկախության նպատակը, համաձայն որի՝ այն պետք է երաշխավորի յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքը՝ առանց անհարկի ճնշումների, հիմնվելով

¹⁹ <https://transparency.am/hy/media/news/article/3091>

²⁰ <https://www.president.am/hy/decrees/item/4972/>

²¹ <https://www.elections.am/Referendum/Referendum>

²² <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11779&Reading=0>

²³ Basic Principles on the Independence of the Judiciary, Adopted by the Seventh United Nations Congress on 1985, <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/independencejudiciary.aspx>.

²⁴ Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարական, կետ 3:

փաստերի և օրենքի վրա: Մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և օրենքի անաչառ կիրառության երաշխիքը մեծապես պայմանավորված է դատավորների իրական անկախությամբ:

Դատական իշխանության անկախության և ինքնուրույնության ապահովման համար կարևոր են ոչ միայն իրավական (օրենսդրական) երաշխիքները, այլ նաև դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունե համակարգի առկայությունը: Հայաստանի դեպքում կարևոր են Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) և Դատավորների ընդհանուր ժողովի գործունեության թափանցիկության ապահովումը, մասնագիտական ներուժի և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը: Միաժամանակ դատական իշխանության անկախության ամրապնդման տեսանկյունից որոշիչ նշանակություն ունեն դատական իշխանության ֆինանսավորման, դատավորների նշանակման և նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգավորումների կատարելագործումը, դատավորների և նրանց աշխատակազմի համաչափ վարձատրությունը, դատավորների նկատմամբ հանրային վստահության բարձրացումը:

Ռազմավարական այս նպատակի իրականացման համար սահմանվել են հետևյալ ռազմավարական ուղղությունները՝

✓ Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան ընթացակարգերի ներդրում

«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի բարեփոխումներ հետևյալ հիմնական ուղղություններով՝

ա) գնահատման հանձնաժողովի կազմավորման կարգի փոփոխություն,

բ) գնահատման պատճառաբանվածության ապահովմանն ուղղված կարգավորման նախատեսում,

գ) միջազգային առաջատար փորձի կիրառմամբ մշակված հոգեբանական թեստի անցկացում,

դ) դատավորների, այդ թվում՝ սույն ռազմավարությամբ նախատեսված Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածություն,

ե) քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգի ներդրում և Բարձրագույն դատական խորհրդի որոշման ընդունման թափանցիկության ապահովում:

✓ Դատավորներին և Բարձրագույն դատական խորհրդի անդամներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերի և ընթացակարգերի ներդրում

Ռեզումեարության հաստատման պահին Դատական օրենսգրքում որոշակիորեն բարելավվել են կարգապահական պատասխանատվության կարգավորումները, սակայն դեռևս առկա էին որոշակի թերություններ, որոնք խոչընդոտում էին կարգապահական պատասխանատվությունն իր նպատակային նշանակությանը համապատասխան կիրառելը: Մասնավորապես.

ա) դատավորին և ԲԴԽ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը բավականաչափ հստակ չեն, ուստի կանխատեսելի չէ դրանց մեկնաբանությունը.

բ) գործող օրենսգրքով նախատեսված կարգապահական տույժերի համակարգը խիստ սահմանափակ է և ընդգրկում է միայն ամենամեղմ տույժերը և ամենախիստը՝ լիազորությունների դադարեցումը, ինչը հնարավորություն չի տալիս ապահովելու կարգապահական պատասխանատվության համաչափությունը.

գ) բացակայում է դատավորին և ԲԴԽ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման բողոքարկման ընթացակարգը.

դ) գործող օրենսգրքում դատավորին և ԲԴԽ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքում ԲԴԽ-ն բավականին սահմանափակ գործիքակազմ ունի արդյունավետ և բազմակողմանի քննություն ապահովելու համար:

Նշյալ երկու ուղղությունների կատարման կամ ապահովման նպատակով «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի մեջ 2019-2021 թթ.-ի ընթացքում կատարվել է 11 փոփոխություն և լրացում: Այդպիսով, լուծում են ստացել մի շարք հարցեր, որոնց արդյունավետությունը հատկապես իրավակիրառ պրակտիկայում կզնահատվի ժամանակի ընթացքում: Խոսքը մասնավորապես վերաբերում է հետևյալ խնդիրներին²⁵

- մինչդատական քրեական վարույթի գործերի քննությունը քրեական մասնագիտացման առանձին դատավորների կողմից,
- դատավորների թվակազմի ավելացում ինչպես առաջին ատյանի ընդհանուր իրավասության, այնպես էլ Վերաքննիչ քրեական դատարանում,
- մինչդատական քրեական վարույթի գործերի քննության իրականացումը վերապահել ինչպես գործող դատավորներին, այնպես էլ նոր համալրված կադրերին՝ ընդ որում՝ առանձնահատկություններ սահմանելով Երևան քաղաքի (առանձին դատավորներ քննելու են միայն այդ գործերը) և մարզերի դատարանների (առանձին դատավորներ քննելու են այդ գործերը և, ի լրումն դրանց, նաև այլ քրեական գործեր) համար՝ հաշվի առնելով վերջիններիս ծանրաբեռնվածության և մարզերում դատավորների թվաքանակի հարաբերակցությունը,

²⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153808>,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=156892>

- դատավորների թափուր հաստիքների առաջին համալրման առանձնահատուկ ընթացակարգ, մասնավորապես գործող դատավորների համար հոգեբանական թեստավորման փուլն անցնելու և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (ԿԿՀ) բարեվարքության հարցաթերթիկ ներկայացնելու իմպերատիվ պահանջ,
- գործող դատավորների վարույթում քննվող քրեական այլ գործերի բաշխման կանոնները մինչդատական քրեական վարույթի գործեր և կոռուպցիոն հանցագործությունների հետ կապված գործեր քննող դատավոր նշանակվելու դեպքերում:

✓ Հանրության շրջանում դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացում

Նախատեսվում էր միջոցներ ձեռնարկել դատական իշխանության և հանրության միջև համագործակցությունն ու արդյունավետ հաղորդակցությունը ապահովելու, ինչպես նաև բնակչության շրջանում դատական իշխանության դերի, բարձր առաքելության վերաբերյալ իրազեկվածությանը նպաստելու ուղղությամբ: Ծրագրված էր կազմակերպել հանրային իրազեկման աշխատանքներ և հանրությանը տեղեկացնել դատական բարեփոխումների (այդ թվում՝ դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման, կարգապահական պատասխանատվության կառուցակարգերի բարելավման) ընթացքի, դրանց արդյունքում արձանագրված հաջողությունների, դատարանների գործունեության բարելավման, արդարադատության մատչելիության բարձրացման, դատարանի անկախության երաշխիքների գործնական կիրառման մասին, ինչի արդյունքում կաճի վստահությունը դատական իշխանության նկատմամբ, ինչպես նաև կմեծանա դատավորի պաշտոնի գրավչությունը:

Ռազմավարական այս ուղղության կատարման համատեքստում դժվար է վկայակոչել որևէ ակնառու կամ հիշարժան միջոցառում կամ գործողություն: Հանրությունը լայն առումով անհաղորդ է մնացել իրականացվող միջոցառումներին, ստիպված է եղել բավարարվել պաշտոնական հաղորդագրություններով, ինչն ամենևին չի նպաստել դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանը:

✓ Դատավորների և նրանց աշխատակազմի վարձատրության բարձրացում և թվակազմի ավելացում

Դատավորներին և նրանց աշխատակազմին մրցունակ աշխատավարձի տրամադրումը, անկասկած, դատական համակարգ բարձրակարգ մասնագետների մուտքը խրախուսելու և նրանց անկախությունն ապահովելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի, հետևաբար

ռազմավարությամբ ամրագրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է թե՛ ավելացնել դատավորների թվակազմը, թե՛ նրանց ապահովել համարժեք վարձատրությամբ: Դատավորների թվակազմի ավելացումը հնարավորություն կտա ապահովելու դատական բարեփոխումների անցնցում ընթացքը՝ բացառելով բարեվարքության գնահատման հետևանքով դատավորների թվի հնարավոր կրճատումը: Բացի օգնականներից և գործավարներից՝ դատավորների աշխատակազմում նաև բարձր որակավորում ունեցող փորձագետների ներգրավելը կբարձրացնի դատական ակտերի որակը և կամրապնդի դրանցում մարդու իրավունքների միջազգային չափանիշների կիրառման պրակտիկան:

Ներկայումս դատավորներին և նրանց աշխատակազմին տրվող վարձատրությունը համարժեք չէ նրանց ծանրաբեռնվածությանը²⁶, ինչի հետևանքով ոչ միայն վտանգվում է դատարանների անաչառությունը, և առաջանում են կոռուպցիոն ռիսկեր, այլև առաջատար իրավաբանների համար դատական համակարգը մնում է ոչ գրավիչ: Օրինակ՝ Երևան քաղաքում քաղաքացիական գործերով մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը 2013 թվականին կազմել է 632 գործ, 2018 թվականին՝ 1290 գործ, իսկ մարզերում՝ 2013 թվականին՝ 469 գործ, 2018 թվականին՝ 1447 գործ²⁷: Երևան քաղաքում քրեական գործերով մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը 2013 թվականին կազմել է 66 գործ, իսկ 2018 թվականին՝ 81 գործ, մարզերում՝ 2013 թվականին՝ 74 գործ, 2018 թվականին՝ 84 գործ²⁸: Չնայած ներկայացված վիճակագրությանը, 2014 թվականից ի վեր դատավորների դրույքաչափը փոփոխության չի ենթարկվել:

Բարեփոխումների այս ուղղության համատեքստում ակնկալվում էր, որ դատական իշխանությունն ավելի գրավիչ կդառնա առաջատար մասնագետների համար, դատական համակարգում կնվազեն կոռուպցիոն ռիսկերը, ինչպես նաև զգալիորեն կթեթևանա դատավորների ծանրաբեռնվածությունը, ինչը կնպաստի գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանմանը:

Պետք է նշել, որ թեև 2019-2021 թթ.-ի ընթացքում որոշակիորեն ավելացվեց դատավորների թվակազմը, այդուհանդերձ, այդ ընթացքում ինստիտուցիոնալ քայլեր չկատարվեցին գործող դատավորների բարեվարքության գնահատման ուղղությամբ. ակնկալվում է, որ դրանք կձեռնարկվեն հետագա տարիների ընթացքում: Նույն ժամանակամիջոցում էական առաջընթաց չարձանագրվեց գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման սկզբունքի առնչությամբ. երբեմն անգամ նկատելի էր հակառակ պատկերը:

²⁶ Տե՛ս ԲԴԽ 2019 թ.-ի տարեկան հաղորդումը՝

http://court.am/arm/left/annual_report/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4.pdf

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 62:

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 62-63:

1.5 Կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ

Դատական համակարգում կոռուպցիայի առկայության խնդիրը մշտապես եղել է ինչպես հանրային, այնպես էլ մասնագիտական քննարկումների առարկա՝ ունենալով հստակ և օբյեկտիվ հիմքեր: Երբ 2013 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ արտահերթ զեկույցով²⁹ նաև հանրային իշխանության օրակարգ մտցրեց դատական համակարգում լայնամասշտաբ կոռուպցիայի առկայության խնդիրը, այն դարձավ իշխանություններից հրատապ լուծում պահանջող առաջնահերթություն: Տարբեր տեղական և միջազգային կազմակերպություններ շարունակաբար ընդգծել են այս խնդիրը և դրա դեմ պայքարելու անհրաժեշտությունը³⁰: «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2017»-ի տվյալներով՝ հարցվածների 41%-ը կարծում է, որ Հայաստանի դատավորների մեծամասնությունը կամ նրանցից յուրաքանչյուրը կաշառք է վերցնում, իսկ 17%-ի կարծիքով՝ միայն որոշ դատավորներ են կաշառք վերցնում:

Դատական համակարգում կոռուպցիայի հաղթահարումը սույն ռազմավարության ԲՍՑԱՐԶԱԿ առաջնահերթություններից է:

Ռազմավարական այս նպատակի կատարման ուղղություններից են.

✓ *Դատավորների բարեվարքության գնահատում*

Ռազմավարության, ինչպես նաև Կառավարության ծրագրի բացարձակ առաջնահերթություններից է դատավորների բարեվարքության գնահատման արդյունավետ համակարգի ներդրումը՝ այդ թվում դատավորի գույքային դրության, գույքի օրինականության ստուգման մասով: Ընդ որում, բարեվարքության ստուգման կառուցակարգի սկզբունքային կետերն են՝

ա) բարեվարքության գնահատումը չպետք է իրականացվի ժամանակավոր գործիքակազմի միջոցով և չպետք է կրի ժամանակավոր բնույթ: Փոխարենը, գործընթացը կրելու է շարունակական բնույթ, և դատավորները մշտապես անցնելու են նման գնահատման միջով՝ վարքագծի կանոնի յուրաքանչյուր ենթադրյալ խախտման համար կարգապահական վարույթի շրջանակներում.

բ) դատավորների բարեվարքության գնահատումն իրականացնելու համար ստեղծվելու է ոչ թե նոր՝ ad hoc մարմին, այլ այդ հարցի լուծման համար պատասխանատու է լինելու դատական համակարգի անկախության ապահովման սահմանադրական առաքելությամբ օժտված մարմինը՝ ԲԴԽ-ն:

✓ *Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի կատարելագործում*

²⁹ <https://www.ombuds.am/images/files/2ddebf4a4ecb335d3cfd24f3cef719e.pdf>

³⁰ https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2017_arm.pdf:

Քանի որ գործող «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն ունեցող մարմիններից որևէ մեկը չունի ո՛չ անհրաժեշտ մասնագիտացում, ո՛չ էլ համապատասխան օրենսդրական լիազորություններ՝ դատավորների հայտարարագրերում առկա թերությունները և կոռուպցիոն ռիսկերը հայտնաբերելու համար, անհրաժեշտ է նման լիազորությամբ օժտել ԿԿՀ-ին: Մինևույն ժամանակ անհրաժեշտ ապացույցներ պահանջելու և ստանալու հարցով կարիք կա ընդլայնելու ինչպես ԿԿՀ, այնպես էլ ԲԴԽ լիազորությունները: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2019-2022 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվում է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի ընդլայնում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց բանկային, առևտրային, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանալու հնարավորություն:

Ռազմավարության իրականացման 2019-2021 թթ.-ի ընթացքում այս երկու ուղղություններով դեռևս չկան անկառու բարեփոխումներ: Ակնկալվում է, որ առարկայական արդյունքներ կլինեն ռազմավարության իրականացման հաջորդ տարիներին:

1.6 Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում

Դատարանների գործունեության արդյունավետության վերաբերյալ հետազոտությունները վեր են հանում դատական համակարգից օգտվողների անբավարարվածությունը, դատարանների ծանրաբեռնվածության պատճառով գործերի քննության չհիմնավորված երկարաձգումները, դատարանների շենքային պայմանների խնդիրներով պայմանավորված՝ արդարադատության մատչելիության ապահովմանն առնչվող խնդիրները, խոցելի անձանց մասնակցությամբ գործերի քննության հատուկ հմտությունների բացակայությունը և մի շարք այլ խնդիրներ: Մասնավորապես, Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովը («CEPEJ») Հայաստանի դատական համակարգի արդյունավետության վերաբերյալ վերլուծության մեջ նշում է, որ, դատական համակարգից օգտվողների գնահատմամբ, 0-6 բալային սանդղակում Երևանի ընդհանուր իրավասության դատարանում գործերի քննության արագության միջին բալային գնահատականը 2.5 է, իսկ դատավորների անկախության և անաչառության վերաբերյալ միջին բալային գնահատականը՝ 2.4³¹:

Ռազմավարական ուղղություններ

✓ ***Դատարանների ծանրաբեռնվածության նվազեցում և դատական քննության ողջամիտ ժամկետի ապահովում***

³¹ <https://www.coe.int/en/web/cdcj/-/analysis-of-the-results-of-court-users-satisfaction-survey-of-all-courts-of-all-instances-of-armenia>

Վերջին տարիներին Հայաստանում գնալով աճում է դատական գործերի թիվը, մինչդեռ դատավորների թվակազմը գրեթե մնում է անփոփոխ, իսկ արտադատական եղանակով վեճերի լուծման մեխանիզմները դեռևս լիարժեք զարգացած չեն, որ նպաստեն դատարանների գերբեռնվածության նվազմանը:

Եթե 2013 թվականի ընթացքում առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 48.540 քաղաքացիական գործ, ապա 2017 թվականին՝ 137.003 գործ, իսկ 2018 թվականին՝ 129.941 քաղաքացիական գործ: Միևնույն ժամանակ 2013 թվականին ստացվել է 3.376 սնանկության գործ, 2017 թվականին՝ 9.218, իսկ 2018 թվականին՝ 9.326³²:

Դատարանների գերբեռնվածությունը խոչընդոտում է դատական գործերի արագ և արդյունավետ քննությունը՝ հանգեցնելով անձի արդար դատաքննության իրավունքի խախտումների:

2019-2021 թթ.-ի ընթացքում դատարանների գերծանրաբեռնվածության նվազում չի արձանագրվել, իսկ շատ դեպքերում այն ավելացել է: Ակնկալվում է, որ այս նպատակը կյանքի կկոչվի ռազմավարության իրականացման հաջորդ տարիների ընթացքում:

1.7 Քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում

Քրեական օրենսդրության բարեփոխում

ՀՀ գործող քրեական օրենսգիրքն ընդունվել է 2003 թվականին, որից հետո դրա նորմերի գիտական վերլուծությունը և կիրառման պրակտիկան բացահայտել են օրենսգրքում առկա բազմաթիվ թերություններ: Քրեական օրենսգրքում հարյուրից ավելի փոփոխություններ և լրացումներ են կատարվել, սակայն միասնական հայեցակարգային մոտեցման բացակայությունը և քրեագիտական հիմնավորվածության անտեսումը որոշ դեպքերում հանգեցրել են օրենսգրքում առկա հակասությունների և թերությունների խորացմանը: Նման պայմաններում անհրաժեշտություն է առաջացել մշակելու նոր Քրեական օրենսգիրք, որը պետք է վերացնի վերոնշյալ թերությունները և ծառայի հետևյալ նպատակներին՝

- ✓ ստեղծել հանցավորության նվազեցման և քրեական ենթամշակույթի վերացման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքեր,
- ✓ ամրագրել հանցավոր արարքները ոչ հանցավորներից սահմանազատելու հստակ հատկանիշներ, որոնք կբացառեն օրենքի տարածական մեկնաբանությունը,
- ✓ սահմանել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն,
- ✓ կատարելագործել պատժի համակարգը,
- ✓ ապահովել քրեական օրենսդրության համապատասխանությունը վավերացված միջազգային պայմանագրերի նորմերին, միջազգային իրավունքի սկզբունքներին, ինչպես նաև Սահմանադրությանը:

³² Տե՛ս ԲԴԽ 2019 թ.-ի տարեկան հաղորդումը,

http://court.am/arm/left/annual_report/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4.pdf:

2019 թ.-ի ապրիլին արդարադատության նախարարի հրամանով ստեղծվեց նոր Քրեական օրենսգրքի մշակման աշխատանքային խումբ:

Նոր Քրեական օրենսգրքի մշակման արդյունքում հստակեցվել են քրեական օրենսդրության խնդիրները, օրենսգրքում առկա սկզբունքները, փոփոխությունների և ենթարկվել հանցագործությունների դասակարգումը: Հաշվի առնելով ներկա իրողությունները՝ նախատեսվել է մի շարք արարքների թե՛ ապաքրեականացում, թե՛ քրեականացում: Որոշ արարքների ապաքրեականացման համար հիմք են հանդիսացել նաև ՀՀ-ի վավերացրած միջազգային պայմանագրերը:

Քրեական նոր օրենսգրքի նորամուծություններից է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության նախատեսումը, որը հիմնականում պայմանավորված է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքում իրավաբանական անձանց համար իրավական պատասխանատվություն սահմանելու վերաբերյալ ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններով: Չափանիշներ են նախատեսվել մեղսունակության, սահմանափակ մեղսունակության և հարբածության վիճակում հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ: Լուծվել են քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում արարքի որակմանն առնչվող հարցերը:

Ընդլայնվել է ազատագրկման այլընտրանք հանդիսացող պատժատեսակների ցանկը, վերանայվել են պատժի նպատակները: Նոր օրենսգրքով այլևս գոյություն չունեն ռեցիդիվի տարբեր տեսակների դասակարգումներ՝ ըստ կատարված հանցանքի ծանրության: Ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, որը դատվածություն ունի դիտավորյալ հանցագործության կատարման համար:

Բարելավվել են անչափահասների քրեական պատասխանատվության ինստիտուտը և նրանց նկատմամբ կիրառվող պատիժների համակարգը: Այդ նորմերի կիրառումը որոշ դեպքերում տարածվել է նաև քսանմեկ տարին չլրացած անձանց նկատմամբ: Ընդլայնվել է անչափահասների նկատմամբ կիրառվող պատիժների շրջանակը՝ դաստիարակչական միջոցներին ավելի մեծ տեղ տալու նպատակով:

Սահմանվել է անվտանգության միջոցների և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների համակարգը: Անվտանգության միջոցների կիրառման նպատակը հանցանք կատարած անձի «վտանգավոր վիճակի» չեզոքացումն է, նոր հանցագործությունների կանխումը և անձի վերադաստիարակման նպատակը: Անվտանգության միջոցների շարքին են դասվում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները, որոշակի վայրեր այցելելու արգելքը (օրինակ՝ խաղասրահներ,

ռեստորաններ, սրճարաններ և այլն), հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը: Անվտանգության միջոցները կարող են կիրառվել ինչպես պատժի հետ զուգակցված, այնպես էլ առանց դրա՝ որպես ինքնուրույն ներգործության միջոցներ:

Նոր Քրեական օրենսգրքի նախագիծը 2020 թ.-ի նոյեմբերին Կառավարությունը ներկայացրել է Ազգային ժողով, իսկ 2021 թ.-ի մայիսի 5-ին ԱԺ-ն ընդունել է ամբողջությամբ³³: Հայաստանի Հանրապետության նոր Քրեական օրենսգիրքը հիմնականում ուժի մեջ կմտնի 2022 թ. հուլիսի 1-ից: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վերաբերյալ դրույթներն ուժի մեջ կմտնեն 2023 թ.-ի հունվարի 1-ից, իսկ ազատության սահմանափակում պատժատեսակի դրույթները՝ 2023 թ.-ի հուլիսի 1-ից: Կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժատեսակի վերաբերյալ դրույթներն ուժի մեջ կմտնեն օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան կարգապահական գումարտակներ ստեղծելուց և շահագործման հանձնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան 2023 թ.-ի հուլիսի 1-ը:

Քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքն ընդունվել է 1998 թվականին, և դրա կիրառման ավելի քան քսան տարիների ընթացքում երկրի հասարակական և քաղաքական կյանքում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ, որդեգրված իրավական քաղաքականությունը, Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ գործող միջազգային դատարանների և մարդու իրավունքների բնագավառի այլ միջազգային ատյանների, ինչպես նաև Հայաստանի բարձր դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումները անխուսափելի փոփոխություններ են ենթադրում քրեական գործերի քննության և լուծման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող հիմնական իրավական ակտում: Մասնավորապես Քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունն ընդգծվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* և հարակից գործերով վճիռների կատարման վերաբերյալ դիրքորոշման մեջ³⁴:

Նոր Քրեական դատավարության օրենսգիրքը 2021 թվականի հունիսի 30-ին ամբողջությամբ ընդունվել է ԱԺ-ի կողմից³⁵: Այն ուժի մեջ կմտնի 2022 թ.-ի հուլիսի 1-ից:

³³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153080>

³⁴ <https://hudoc.exec.coe.int/eng#%7B%22EXECIIdentifier%22:%5B%22004-355%22%5D%7D>

³⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=154763>

2. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցով ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության նպատակների և ուղղությունների կատարման ընթացքը 2019-2021 թվականների համար: Ուսումնասիրման առարկա են դարձել հետևյալ ռազմավարական նպատակները՝

- անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում,
- սահմանադրական բարեփոխումների անցկացում,
- ընտրական օրենսդրության բարեփոխում,
- դատական իշխանության անկախության և անաչառության ապահովում,
- կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ,
- դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում,
- քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում:

Զեկույցը դատաիրավական բարեփոխումների կամ դրա նպատակների մի մասի վերաբերյալ վերջնական գնահատական տալու հավակնություն չունի: Այն միտված է ամրագրված նպատակներին և գործողությունների պլանին ռազմավարության կատարման համապատասխանության վերաբերյալ նյութ տրամադրելու շահագրգիռ շրջանակներին:

Կարելի է արձանագրել, որ դատաիրավական բարեփոխումների մի մասն ավարտվել է: Խոսքը հատկապես քրեական և քրեադատավարական ոլորտների մասին է, որտեղ այս առումով էական հանգրվան էր նոր օրենսգրքերի ընդունման փաստը: Զգալի աշխատանք է կատարվել նաև դատական համակարգի փոփոխությունների ուղղությամբ: Ի տարբերություն սրանց՝ արդյունքները շոշափելի չեն *սահմանադրական բարեփոխումների դեպքում*: Ավելին, սրա նշանակությունն էական է նաև այն պատճառով, որ ապագա սահմանադրական բարեփոխումները կարող են հանգեցնել արդեն իսկ արված փոփոխությունների շոշափելի վերանայումների, ինչը նշանակում է, որ հնարավոր է աշխատանքի կրկնակի կատարում: Մտահոգիչ է նաև *անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում* ռազմավարական նպատակի կատարման ընթացքը: Չնայած նրան, որ այն պետք է կատարվեր առաջնահերթության սկզբունքով, մինչ օրս որևէ գործողություն այս ուղղությամբ կատարված չէ:

3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արված ուսումնասիրության հիման վրա ներկայացնենք որոշ առաջարկներ, որոնք կարող են բարելավել ռազմավարության կատարման ընթացքն ու նպաստել ակնկալվող արդյունքին հասնելուն:

1. Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը (գործողությունների պլաններով) բնությով և բովանդակությամբ նախորդների համեմատ թերևս ամենաընդգրկունն է: Դրա իրականացումը միայն պետական մարմինների և ինստիտուտների ներգրավմամբ գործնականում անհնար է: Այս առումով կարևոր է ռազմավարության իրականացման աշխատանքներին հանրության լայն շրջանակներին ներգրավելը, առաջին հերթին՝ քաղաքացիական հասարակության ու մասնագիտական շրջանակների ներկայացուցիչներին: Միաժամանակ պետք է նշել, որ ռազմավարական բազմաթիվ նպատակների կամ դրանց ուղղությունների կատարմանը քաղաքացիական հասարակության և մասնագիտական շրջանակների ներկայացուցիչները կա՛մ մասնակցել են, կա՛մ էլ պատկան մարմինները նախատեսում են գործընթացը կազմակերպել նրանց մասնակցությամբ:

2. Դատական և իրավական բարեփոխումներին հանրության մասնակցությունը խթանելու նպատակով կարևոր է միջոցներ ձեռնարկել հասարակության ընդհանուր իրավագիտակցության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Դա հնարավոր է իրականացնել՝ իրազեկման միջոցառումներ և քննարկումներ կազմակերպելով, մատչելի ձևով ներկայացնելով հանրության համար էական թեմաներն ու քննարկվող հարցերին վերաբերող նյութերը (նախագծերը): Նման քննարկումներն արժե իրականացնել տեղական մակարդակով՝ ապահովելով հեռավոր համայնքների բնակիչների մասնակցությունը:

3. Անհրաժեշտ է ապահովել դատաիրավական բարեփոխումներին վերաբերող (և ոչ միայն) օրենսդրական նախագծերի պարտադիր հանրային քննարկումները խելամիտ ժամկետներում, իսկ հանրային լայն հետաքրքրություն ներկայացնող և/կամ առանձին խմբերի (մասնագիտական, սոցիալական, այլ) վրա ազդեցություն ունեցող նախագծերի դեպքում քննարկումներ կազմակերպել ոլորտային փորձագետների և շահագրգիռ խմբերի հետ:

4. Օրենսդրական նախագծերի մասնագիտական քննարկումներ անցկացնել նախագծի մշակման վաղ փուլերում՝ նախքան օրինագծի մշակումը: Այս համատեքստում արժե դիտարկել դրա հիմնական դրույթների և/կամ հայեցակարգի մշակումն ու քննարկումը:

4. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ հանգում ենք հետևյալին.

- Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը չափազանց ընդգրկուն և հավակնոտ փաստաթուղթ է: Դրա իրականացումը հնարավոր է ուժերի, միջոցների, հնարավորությունների և կարողությունների հստակ պլանավորման ու բավարար ջանքերի գործադրման դեպքում:

- Ռազմավարությունը 2019-2021 թվականների ընթացքում որոշ ուղղություններով և նպատակներով իրականացվել է՝ համաձայն նպատակների և գործողությունների պլանով սահմանված կարգի ու ժամանակացույցի: Այնուամենայնիվ, որոշ ուղղությունների դեպքում արձանագրվել են գործողությունների պլանով սահմանված կարգի նկատելի շեղումներ:

- Ուսումնասիրության ժամանակահատվածում փաստվել է, որ հատկապես ներկայացված ռազմավարական նպատակների և ուղղությունների իրագործման վերաբերյալ հանրության լայն զանգվածների համար բավարար չափով չի ապահովվել տեղեկատվությունն ու մասնակցայնությունը:

- Ըստ էության, առանց անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման ու սահմանադրական բարեփոխումների անցկացման՝ լայն թափով կատարվել կամ կատարվում են ընտրական օրենսդրության բարեփոխումները, դատական իշխանության անկախության և անաչառության ապահովմանը միտված գործողությունները, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ ստեղծելու միջոցառումները, բարեփոխվել է քրեական և քրեական դատավարության օրենսդրությունը: Ինստիտուցիոնալ և հայեցակարգային նկատառումներով, սակայն, նախ անհրաժեշտ էր ապահովել անցումային արդարադատության գործիքակազմի կիրառումը և ավարտին հասցնել սահմանադրական բարեփոխումները, հետո միայն կյանքի կոչել ռազմավարական մյուս նպատակներն ու դրանց կատարման ուղղությունները: Հակառակ դեպքում վաղ թե ուշ օբյեկտիվորեն առաջանալու են լրացուցիչ խնդիրներ և դժվարություններ, որոնք հաղթահարելու համար պահանջվելու են հավելյալ ջանքեր ու միջոցներ:

5. ABSTRACT

Based on the activities of the “Helsinki Association” human rights protection NGO, and, in particular, the projects implemented in 2019-2021, this report reflects the compliance of the fulfillment of the goals presented in the Strategy and their directions.

The report summarizes particularly the information and findings obtained by the implemented projects, as well as the relevant information available in open sources.

What has been presented is important and valuable especially since certain actions (strategic goals) that are the subject of study within the framework of the report, which is still incomplete, can be incorporated in the future implementation of the 2019-2023 strategy of Judicial and Legal Reform of the Republic of Armenia.

6. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

«Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գործունեության, հատկապես 2019-2021 թվականների իրականացված ծրագրերի հիման վրա սույն զեկույցում անդրադարձ է կատարվել Ռազմավարության նպատակների և դրանց ուղղությունների կատարման համապատասխան մասին:

Զեկույցի մեջ ամփոփված են մասնավորապես իրականացված ծրագրերով ստացված տեղեկություններն ու տվյալները: Բացի սրանից՝ տեղ են գտել նաև բաց աղբյուրներում առկա վերաբերելի տեղեկություններ:

Ներկայացվածը կարևոր և արժեքավոր է հատկապես այն առումով, որ զեկույցի շրջանակում ուսումնասիրության առարկա դարձած որոշ գործողություններ (ռազմավարական նպատակներ), որ դեռևս անկատար են, հնարավոր է կյանքի կոչել Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության իրականացման հետագա ժամանակահատվածում:

7. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Ազգային ժողով	ԱԺ
Ազգային ժողովի որոշում	ԱԺՈ
Բարձրագույն դատական խորհուրդ	ԲԴԽ
Եվրոպայի խորհուրդ	ԵԽ
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	ԿԿՀ
Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարություն	Ռազմավարություն
Հայաստանի Հանրապետություն	ՀՀ